ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

«24» մարտի 2017թ. № 034/02- 337

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նալբանդյան

Կից ուղարկվում է Սպիտակ համայնքի ղեկավարի 2017 թվականի մարտի 17-ի թիվ 83, թիվ 84, թիվ 85, թիվ 86, թիվ 87, թիվ 88, թիվ 89, թիվ 90, թիվ 91 որոշումները:

Առդիր « 14 » թերթ:

Հարգանքներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ SAHAKYAN GAGIK 3707650340 Digitally signed by SAHAKYAN GAGIK 3707650340 DN: cn=SAHAKYAN GAGIK 3707650340, sn=••••••••, givenName=•••ԳԱՄ, serialNumber=1d9d8e1aca12e Date: 2017.03.24 16:34:46 +04'00' Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

Կատ. Ա. Գյուլազյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

<< 17 >> մարտի 2017թ. № 83

ԲԱՋՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔՈՒՄ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ հաստատված կարգի 3.1-ին, 3.3-րդ, 3.4-րդ և 7-րդ կետերով, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2653708 վկայականը, <<Շինէքսպրտ>> ՍՊԸ-ի եզրակացությունը և Վ.Մանանյանի դիմում-հայտը՝ *որոշում եմ.*

1. Վարդան Լավրենտի Մանանյանին սեփականության իրավունքով պատկանող <<ք.Սպիտակ, Թորոսյան փողոց, շենք 22Ա, բնակարան 5>> հասցեում գտնվող 33,6 քառակուսի մետր մակերեսով բնակարանի գործառնական նշանակությունը փոխել հասարակական գործառնական նշանակության՝ որպես գրասենյակ օգտագործելու համար:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքի գործառնական նշանակության փոփոխությունը ենթակա է պետական գրանցման:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքը՝ գործառնական նշանակության փոփոխության պետական գրանցումից հետո, սահմանված կարգով հանել բնակարանային ֆոնդից:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի քարտուղար Ա.Գյուլազյանի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2017թ. մարտի 17

ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

<< 17 >> մարտի 2017թ. № 84

ԱԻԴԱ ՎՈԼՈԴՅԱՅԻ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ կետով, 66-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման հաստատված կարգի 33-րդ կետով, հիմք ընդունելով Սպիտակ համայնքի ավագանու 2017 թվականի փետրվարի 28-ի թիվ 10-Ա որոշումը, հաշվի առնելով, որ Սպիտակ համայնքի Ուզբեկական թաղամաս, թիվ 15 հասցեում գտնվող, Աիդա Դանիելյանին սեփականության իրավունքով պատկանող 06-006-0094-0026 կադաստրային ծածկագրով 0,056 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին կից բնակավայրերի նպատակային նշանակության 0,04 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ և 7-րդ ենթակետերով սահմանված չափորոշիչներին, որպես առանձին գույքային միավոր հնարավոր չէ օտարել աճուրդով, նշված հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով չփոխանցվող հողամասերի ցանկի մեջ, հիմք ընդունելով 2017 թվականի մարտի 9-ի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 09032017-06-0022 վկայականը և Աիդա Դանիելյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի Ուզբեկական թաղամասի վրա գտնվող 06-006-0094-0036 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության

հողամասերից 0,04 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման հողամասը, 1 քմ 528 ՀՀ դրամ կադաստրային արժեքով (ընդամենը 211 200 ՀՀ դրամ) ուղղակի վաճառքով օտարել Աիդա Դանիելյանին (ծնված 17.03.1968թ.):

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել <<ք.Սպիտակ, Ուզբեկական թաղամաս, թիվ 15/1 >> հասցեն:

3. Աիդա Դանիելյանի հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որից ծագող իրավունքը սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Կարեն Հայրապետյանի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2017թ. մարտի 17

ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«17» մարտի 2017թ. N 85

ՄԱՐԻՆԵ ՇՈԹԱՅԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՏԱԼԱԿԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 51Տ. ՀԱՍՑԵԻ ՏՆԱԿԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՆԱԽԿԻՆ ՀԱՍՑԵՆ ՉԵՂՅԱԼ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 36-րդ կետով, 53-րդ կետի «բ» պարբերությամբ և 55-րդ կետով, հաշվի առնելով, որ Իտալական թաղամաս, թիվ 51տ. հասցեի տնակը բնակելի նպատակային նշանակության ոչ հիմնական շինություն է՝ *որոշում եմ.*

1. «Իտալական թաղամաս, թիվ 51տ.» հասցեն փոփոխել «քաղաք Սպիտակ, Իտալական թաղամաս, թիվ 51 տնակ» հասցեով:
2. «Իտալական թաղամաս, թիվ 51տ.» հասցեն համարել չեղյալ:
3. Մարինե Շոթայի Հակոբյանին՝ ապահովել ընտանիքի անդամների՝

   Մարինե Շոթայի Հակոբյան - ինքը, ծնված՝ 1967 թվականին,
   Գագիկ Հմայակի Մխիթարյան - ամուսինը, ծնված՝ 1950 թվականին,
   Ալեն Գագիկի Մխիթարյան - տղան, ծնված՝ 1995 թվականին,
   Էդմոն Գագիկի Մխիթարյան - տղան, ծնված՝ 1997 թվականին,

   օրենքով սահմանված կարգով հաշվառումը:
4. Հանձնարարել քարտուղարության բաժնին՝ հասցեների և բնակչության պետական ռեգիստրում փոփոխություն կատարելու նպատակով սույն որոշման մեկ օրինակը տրամադրել Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Սպիտակի անձնագրային բաժանմունքին:
5. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Անահիտ Գյուլազյանի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2017թ. մարտի 17
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 17 » մարտի 2017թ. N 86

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՏԱԼԱԿԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 157Տ. ՀԱՍՑԵԻ ՏՆԱԿԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ, ՆԱԽԿԻՆ ՀԱՍՑԵՆ ՉԵՂՅԱԼ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՍԵՅՐԱՆ ՍԱՍՈՒՆԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, 42-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 36-րդ կետով, 53-րդ կետի «բ» պարբերությամբ և 55-րդ կետով, հաշվի առնելով, որ Իտալական թաղամաս, թիվ 157տ. հասցեի տնակը բնակելի նպատակային նշանակության ոչ հիմնական շինություն է, հիմք ընդունելով Սեյրան Սասունի Մուրադյանի դիմումը՝ *որոշում եմ.*

1.«Իտալական թաղամաս, թիվ 157տ.» հասցեն փոփոխել «քաղաք Սպիտակ, Իտալական թաղամաս, թիվ 157 տնակ» հասցեով:

2. «Իտալական թաղամաս, թիվ 157տ.» հասցեն համարել չեղյալ:

3. Սպիտակ քաղաքի Իտալական թաղամաս, թիվ 157 հասցեի տնակը ժամանակավոր բնակության համար հատկացնել Սեյրան Սասունի Մուրադյանի ընտանիքին.

Սեյրան Սասունի Մուրադյան - ինքը, ծնված՝ 1976 թվականին,
Հռիփսիմե Հմայակի Թորոսյան - կինը, ծնված՝ 1982 թվականին,
Սասուն Սեյրանի Մուրադյան - որդին, ծնված՝ 2005 թվականին,
Ջուլիետա Սեյրանի Մուրադյան - աղջիկը, ծնված՝ 2006 թվականին,
Արտյոմ Սասունի Մուրադյան - եղբայրը, ծնված՝ 1980 թվականին,
Սուսաննա Սասունի Կարապետյան - քույրը, ծնված՝ 1977 թվականին,
Վիկտոր Բալոյի Ալեքյան – տատը, ծնված՝ 1920 թվականին:

4. Սեյրան Սասունի Մուրադյանին՝

1) ապահովել ընտանիքի անդամների օրենքով սահմանված կարգով հաշվառումը.

2) ընդունել ի գիտություն, որ հատկացումից հետո վեց ամիս անընդմեջ տնակը չբնակեցնելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

5.Տնակի շահագործման կանոնների պահպանման, նպատակային նշանակությամբ օգտագործման հսկողությունը հանձնարարել «Հյուսիս-Արևմտյան» թաղամասում

Սպիտակի համայնքապետարանի լիազոր ներկայացուցիչ Գյուլնարա Իգիթխանյանին:

6.Հանձնարարել քարտուղարության բաժնին՝ հասցեների և բնակչության պետական ռեգիստրում փոփոխություն կատարելու նպատակով սույն որոշման մեկ օրինակը տրամադրել Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Սպիտակի անձնագրային բաժանմունքին:

7. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Անահիտ Գյուլազյանի վրա:

8. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Սպիտակի քաղաքապետի 2008 թվականի սեպտեմբերի 26-ի «Սպիտակ քաղաքի Իտալական թաղամասի թիվ 157 ժամանակավոր կացարանը վերահատկացնելու մասին» թիվ 213 որոշումը:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2017թ. մարտի 17
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«17» մարտի 2017թ. N 87

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՏԱԼԱԿԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 24Տ. ՀԱՍՑԵԻ ՏՆԱԿԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ, ՆԱԽԿԻՆ ՀԱՍՑԵՆ ՉԵՂՅԱԼ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ԳԵՂԵՑԻԿ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, 42-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 36-րդ կետով, 53-րդ կետի «բ» պարբերությամբ և 55-րդ կետով, հաշվի առնելով, որ Իտալական թաղամաս, թիվ 24տ. հասցեի տնակը բնակելի նպատակային նշանակության ոչ հիմնական շինություն է, հիմք ընդունելով Գեղեցիկ Հովհաննեսի Սարգսյանի դիմումը՝ *որոշում եմ.*

1.«Իտալական թաղամաս, թիվ 24տ.» հասցեն փոփոխել «քաղաք Սպիտակ, Իտալական թաղամաս, թիվ 24 տնակ» հասցեով:

2. «Իտալական թաղամաս, թիվ 24տ.» հասցեն համարել չեղյալ:

3. Սպիտակ քաղաքի Իտալական թաղամաս, թիվ 24 հասցեի տնակը ժամանակավոր բնակության համար հատկացնել Գեղեցիկ Հովհաննեսի Սարգսյանի ընտանիքին.

Գեղեցիկ Հովհաննեսի Սարգսյան - ինքը, ծնված՝ 1982 թվականին,
Գեղամ Հովհաննեսի Սարգսյան - եղբայրը, ծնված՝ 1974 թվականին,
Վերոնիկա Աղաբեկի Սարգսյան – աղջիկը, ծնված՝ 2009 թվականին,

4. Գեղեցիկ Հովհաննեսի Սարգսյանին՝

1) ապահովել ընտանիքի անդամների օրենքով սահմանված կարգով հաշվառումը.

2)ընդունել ի գիտություն, որ հատկացումից հետո վեց ամիս անընդմեջ տնակը չբնակեցնելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

5.Տնակի շահագործման կանոնների պահպանման, նպատակային նշանակությամբ օգտագործման հսկողությունը հանձնարարել «Հյուսիս-Արևմտյան» թաղամասում Սպիտակի համայնքապետարանի լիազոր ներկայացուցիչ Գյուլնարա Իգիթխանյանին:

6.Հանձնարարել քարտուղարության բաժնին՝ հասցեների և բնակչության պետական ռեգիստրում փոփոխություն կատարելու նպատակով սույն որոշման մեկ օրինակը տրամադրել Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և

վիզաների վարչության Սպիտակի անձնագրային բաժանմունքին:

7. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Անահիտ Գյուլազյանի վրա:

8. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Սպիտակի քաղաքապետի 2016 թվականի ապրիլի 6-ի «Սպիտակ համայնքի Իտալական թաղամասի թիվ 24 հասցեի ժամանակավոր կացարանը ժամանակավոր բնակության նպատակով Գեղեցիկ Սարգսյանի ընտանիքին հանձնելու մասին» թիվ 121 որոշումը:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2017թ. մարտի 14
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«17» մարտի 2017թ. N 88

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՏԱԼԱԿԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 166 ՀԱՍՑԵԻ ՏՆԱԿԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՄԼԵՏ ԳԵՐԱՍԻՄԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, 42-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «դ» պարբերությամբ, 36-րդ և 55-րդ կետերով, հաշվի առնելով, որ Համլետ Գերասիմի Հայրապետյանը փաստացի տիրապետում է Իտալական թաղամաս, թիվ 166 հասցեի տնակին, հիմք ընդունելով Համլետ Գերասիմի Հայրապետյանի դիմումը՝ *որոշում եմ.*

1.Սպիտակ համայնքի «Իտալական թաղամաս, թիվ 166տ.» հասցեն փոփոխել «քաղաք Սպիտակ, Իտալական թաղամաս, թիվ 166 տնակ» հասցեով:

2.«Իտալական թաղամաս, թիվ 166տ.» հասցեն համարել չեղյալ:

3.Սպիտակ համայնքի Իտալական թաղամաս, թիվ 166 հասցեի տնակը ժամանակավոր բնակության համար հատկացնել Համլետ Գերասիմի Հայրապետյանի ընտանիքին.

Համլետ Գերասիմի Հայրապետյան – ինքը, ծնված՝ 1946 թվականին,

Իրինա Վիտյայի Ուլիխանյան – հարսը, ծնված՝ 1980 թվականին:

4.Համլետ Գերասիմի Հայրապետյանին՝

1) ապահովել ընտանիքի անդամների՝ օրենքով սահմանված կարգով հաշվառումը.

2)ընդունել ի գիտություն, որ հատկացումից հետո վեց ամիս անընդմեջ ժամանակավոր կացարանը չբնակեցնելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

5.Տնակի շահագործման կանոնների պահպանման, նպատակային նշանակությամբ օգտագործման հսկողությունը հանձնարարել «Հյուսիս-Արևմտյան» թաղամասում Սպիտակի համայնքապետարանի լիազոր ներկայացուցիչ Գյուլնարա Իգիթխանյանին:

6.Հանձնարարել քարտուղարության բաժնին՝ հասցեների և բնակչության պետական ռեգիստրում փոփոխություն կատարելու նպատակով սույն որոշման մեկ օրինակը տրամադրել Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Սպիտակի անձնագրային բաժանմունք:

7.Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Անահիտ Գյուլազյանի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2017թ. մարտի 17
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 17 » մարտի 2017թ. N 89

ԶՎԱՐԹ ՍՈՒՐԵՆԻ ՋՈՒԼՀԱԿՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՏԱԼԱԿԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 92Տ. ՀԱՍՑԵԻ ՏՆԱԿԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՆԱԽԿԻՆ ՀԱՍՑԵՆ ՉԵՂՅԱԼ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 36-րդ կետով, 53-րդ կետի «բ» պարբերությամբ և 55-րդ կետով, հաշվի առնելով, որ Իտալական թաղամաս, թիվ 92տ. հասցեի տնակը բնակելի նպատակային նշանակության ոչ հիմնական շինություն է՝ *որոշում եմ.*

1. «Իտալական թաղամաս, թիվ 92տ.» հասցեն փոփոխել «քաղաք Սպիտակ, Իտալական թաղամաս, թիվ 92 տնակ» հասցեով:
2. «Իտալական թաղամաս, թիվ 92տ.» հասցեն համարել չեղյալ:
3. Զվարթ Սուրենի Ջուլհակյանին՝ ապահովել ընտանիքի անդամների՝

   Զվարթ Սուրենի Ջուլհակյան - ինքը, ծնված՝ 1964 թվականին,
   Ջիվան Գագիկի Ղազարյան - որդին, ծնված՝ 1994 թվականին,
   Գարիկ Գագիկի Ղազարյան - որդին, ծնված 1986 թվականին,

օրենքով սահմանված կարգով հաշվառումը:

4. Հանձնարարել քարտուղարության բաժնին՝ հասցեների և բնակչության պետական ռեգիստրում փոփոխություն կատարելու նպատակով սույն որոշման մեկ օրինակը տրամադրել Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Սպիտակի անձնագրային բաժանմունքին:
5. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Անահիտ Գյուլազյանի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2017թ. փետրվարի 17
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

8/Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

<< 17 >> մարտի 2017թ. № 90

ՍՈՒՍԱՆՆԱ ԴԱՐՉԻՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառնական նշանակությունը փոխելու կարգով, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1955760 վկայականը, <<Տեխպրոյեկտ>> ՍՊԸ-ի եզրակացությունը և Ս.Դարչինյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սուսաննա Ալեքսանի Դարչինյանին սեփականության իրավունքով պատկանող Պանրագործների թաղամաս, թիվ 2 հասցեում գտնվող 06-006-0037-0028 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,105 հեկտար բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա ավտոտնակի 13,58 քառակուսի մետր մակերեսով հատվածի օգտագործման նպատակը փոխել մառան, իսկ 21,42 քառակուսի մետր մակերեսով հատվածի գործառնական նշանակությունը փոխել՝ հասարակական գործառնական նշանակության, որպես խանութ օգտագործելու համար:

2. Սույն որոշմամբ կատարված փոփոխությունը ենթակա է պետական գրանցման:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Կարեն Հայրապետյանի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2017թ. մարտի 17
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

<< 17 >> մարտի 2017թ. № 91

ԹՈՐՈՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՎՐԱ ԳՏՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԿԱՌՈՒՅՑՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին պարբերությամբ, 4-րդ մասի 1-ի պարբերությամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի 33-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, հաշվի առնելով, որ Սպիտակի համայնքի սեփականություն հանդիսացող 0503-0032 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասերից 0,02268 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական դասակարգման հողամասի վրա 2006 թվականին կառուցված 14,70 քառակուսի մետր մակերեսով մառանը և 9,88 քառակուսի մետր մակերեսով անասնագոմը կառուցված են քաղաքաշինական նորմերին ու կանոններին համապատասխան, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, կամ վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, հիմք ընդունելով <<Տեխպրոյեկտ>> ՍՊԸ-ի եզրակացությունը, <<Մել և Միլ>> գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն ՍՊԸ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակի համայնքի սեփականություն հանդիսացող Թորոսյան փողոցի վրա գտնվող 0503-0032 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասերից 0,02268 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական դասակարգման հողամասի վրա գտնվող ինքնակամ կառույցների՝ 14,70 քառակուսի մետր մակերեսով մառանի և 9,88 քառակուսի մետր մակերեսով անասնագոմի նկատմամբ ճանաչել համայնքի սեփականության իրավունքը և առանձնացնել դրանց պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասը՝ համաձայն հատակագծի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված կառույցները՝ մառանը և անասնագոմը ճանաչել օրինական և տրամադրել <<ք.Սպիտակ, Թորոսյան փողոց, թիվ 130 >> հասցեն:

3. Սույն որոշումը 5-օրյա ժամկետում տրամադրել ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ ՝ սահմանված կարգով պետական գրանցում կատարելու համար:

4. Իրավունքի պետական գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն ներկայացնել կառույցն իրականացրած Փարանձեմ Գալուստի Մինասյանին (ծնված 19.09.1948թ.) օրինականացված կառույցը և դրա պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասը սահմանված կարգով և գներով սեփականության իրավունքով կամ վարձակալությամբ ձեռք բերելու համար:

5. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Կարեն Հայրապետյանի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2017թ. մարտի 17
ք.Սպիտակ